ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

16 փետրվարի **2016 թվականի N** *21-Ն*

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆԴԵՐՔԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 42-րդ և 44-րդ հոդվածներով, հիմք ընդունելով «ԳԵՂԻ ԳՕԼԴ» ՍՊ ընկերության 2015 թվականի հուլիսի 31-ի թիվ 16 դիմումը, ՀՀ բնապահպանության նախարարության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման 2015թ. դեկտեմբերի 28-ի թիվ ԲՓ 99 դրական եզրակացությունը.

Հրամայում եմ

1. «ԳԵՂԻ ԳՕԼԴ» ՍՊ ընկերությանը՝ ՀՀ Սյունիքի մարզի Գեղի գետի ավազանի հանքային դաշտում երկրաբանական ուսումնասիրություններ կատարելու համար 2012 թվականի նոյեմբերի 15-ին տրամադրված թիվ ԵՀԹ-29/125 թույլտվության մեջ կատարել փոփոխություն՝ ժամկետը երկարաձգել, սահմանելով այն մինչև 2017 թվականի սեպտեմբերի երեսունը, նվազեցնել զբաղեցրած տարածքը 8470.03 հա-ով, սահմանել 1009.97 հա հետևյալ կոորդինատներով՝

1.X=4344527 Y=8592419; 2.X=4345023 Y=8593401; 3.X=4345181 Y=8593315 4.X=4345317 Y=8593342; 5.X=4345560 Y=8593648; 6.X=4345816 Y=8593750; 7.X=4346453 Y=8593841; 8.X=4347099 Y=8592373; 9.X=4347842 Y=8591750; 10.X=4349692 Y=8590950; 11.X=4350242 Y=8591950; 12.X=4348742 Y=8592900; 13.X=4344411 Y=8596087; 14.X=4343948 Y=8594028; (մակերեսը 1009.97 հա) (տրված է ARM WGS-84 համակարգով):

2) թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2017 թվականի սեպտեմբերի երեսունը :

2. *Աշխատակազմի ընդերքի տրամադրման գործակալության պետին՝*

1) 2 օրվա ընթացքում սույն հրամանի 1-ին կետի համաձայն կատարել փոփոխություն 2012 թվականի նոյեմբերի 15-ի՝ օգտակար հանածոների

արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թիվ Պ-125 ընդերքօգտագործման պայմանագրում և ծանուցել ընկերությանը՝ հրամանը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում ընդերքօգտագործման պայմանագրի փոփոխությունն իր կողմից վավերացնելու մասին.

2) օրենքով նախատեսված ժամկետի սահմաններում ընդերքօգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերում կատարված փոփոխությունները ներկայացնել իմ վավերացմանը.

3) ընկերության կողմից պայմանագրում կատարված փոփոխությունը վավերացվելուց հետո, 10-օրյա ժամկետում, ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվության, ընդերքօգտագործման պայմանագրի փոփոխված տարբերակը.

4) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագրի փոփոխությունը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փոփոխությունների փաթեթը չստանալու դեպքում, սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած.

5) ապահովել համապատասխան գրառումների կատարումը երկրաբանական ուսումնասիրությունների իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

3. *<Հանրապետական երկրաբանական ֆոնդ> ՊՈԱԿ-ի տնօրենին* - ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի տրամադրման գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով կամ վարչական դատարան ուժի մեջ մտնելուց հետո 2-ամսյա ժամկետում:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԵՐՎԱՆԴ ԶԱԽԱՐՅԱՆ